

ԱՎ. ԱՐԱՍԽԱՆՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

Գ. ԱՆԱՆՑԱՆ

Արասխանյան-հրապարակախոսի մասին Արսեն Տերտերյանը գրել է. «Անսպառ հետաքրքրություն ունեւր: Նա շեղմորեն հետաքրքրվում էր ոչ միայն հայկական կյանքով, այլև համաշխարհային անց ու դարձով: Մի իսկական աշխարհաքաղաքացի, որի սրտին շատ մոտ էին երկրագնդի բոլոր անկյուններում կատարվող փիչ-շատ աչքի ընկնող երևույթներն ու դեպքերը: Այդ հետաքրքրական գիծը ցայտուն կերպով արտահայտված է նրա քաղաքական տեսություններում. նա բառիս բուն նշանակությամբ ապրում էր համաշխարհային, զխափորապես համաեվրոպական կյանքով¹: Այս լայն ընդգրկումից կանդրադառնանք հայկական կյանքին վերաբերող հարցերին և «համաեվրոպական կյանքի» այն խնդիրներին, որոնք այս կամ այն կերպ առնչվում էին մեր իրականությունը:

Արասխանյանն ականատեսը եղավ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի, ազատագրական երազանքների փլուզման, 1894—96 թթ. շարդերի, ռուսական առաջին հեղափոխության վերելքի ու պարտություն: Այս նշանակալից երևույթները իրենց արձագանքը գտան նրա հրապարակախոսության մեջ: Լինելով սթափ մտածող, նա կարողացավ բարդ ու հակասական հարցերի լուծումներ գտնել:

Արասխանյանի մեջ վաղ է արթնացել արևմտահայության տնտեսական, քաղաքական, գրական-մշակութային կյանքի նկատմամբ հետաքրքրությունը: Դեռևս Լայպցիգի համալսարանի ուսանող, նա գործուն մասնակցություն է ունենում ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ստեղծված իրադրության քննարկմանը: Պատերազմը դեռ չէր սկսվել, բայց արևելահայ մամուլը լայնորեն քննարկում էր հնարավոր ընդհարումն ու այդ դեպքում հայերի բռնելիք դիրքը: Պատերազմին նախորդած տարվա հաջողություններից մեկն էլ արևմտահայերի նկատմամբ արևելահայերի շրջանում ծնունդ առած բուռն հետաքրքրությունն է համարում նա: «Երբեք մեր հաղորդակցությունը, մեր մտքերի փոխանակությունը Քուրթիայի հայերի հետ այնքան հաճախ չէր եղած, որքան անցյալ 76 թվին: Երբեք նոցա վշտերը այնքան մեր սրտի մոտիկ չենք ընդունել, երբեք մեզ նոցա այնքան եղբայր չենք անվանել, որքան 76 թվականում, երբ նոցա թվառ դրությունը հայելու նման մեր առաջը կանգնեց»²: Սկսված հետաքրքրությունը տևական ու արդյունավետ դարձնելու հիմնական միջոցը Արասխանյանը տեսնում էր երկու հատվածների գրականությունների ու մշակույթի փոխադարձաբար ուսումնասիրության մեջ: «Մեզ հարկավոր է գրականական միություն», իսկ դրան հասնելու համար վերացնել է պետք գրականության լեզուների տարբերության ստեղծած խոչընդոտը: Ո՞րն է ելքը. «Մեր սրբազան պարտականությունն է քննել և ընդունել «պոլսական» բարբառներից այն բոլոր արդեն մշակված ձևերը, դարձվածները և խոսքերը, որոնք պակասում են «երևանյան» բարբառների մեջ: Նույնը և Քուրթիայի հայերը մեզ վերաբերմամբ: Այս վիճակին կարելի է հասնել այն դեպքում, երբ մենք մեզ մի կզգանք ազգով, այս բառի ամենաընդարձակ նշանակությամբ»³:

Շահագրգռված լինելով հայ ժողովրդի երկու հատվածների միջև «ավելի սերտ կապի» ստեղծմամբ, «Մուրճի» խմբագիր-հրատարակիչ Արասխանյանն անում էր ամեն քան այդ շահագրգռությունը կոնկրետ գործողություն վերածելու համար: Քուրթիական ու պարսկական բռնակալության դաժան լծի տակ հեծող հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական անմխիթար վիճակը պատկերող բազմաթիվ ուղեգրություններ են տպագրվել ամսագրում: Հատկանշական է, որ ուղեգրություններին մեծ տեղ է հատկացվում հատկապես նրա հրատարակության առաջին տարիներին: Դա չի կարելի բացատրել գեղարվեստական գործերի պակասով, քանի որ, ինչպես վկայում էր Արասխանյանը, հրատարակելու արժանի վեպերով «Մուրճը» միշտ էլ

¹ «Նոր հոսանք», Քիֆլիս, 1914, № 1, էջ 128—129:

² «Մշակ», 1877, № 22:

³ Ն. տ., 1880, № 19:

ապահովված է եղել: Ի՞նչն էր, ուրեմն, պատճառը: Թերևս այն, որ ուղեգրությունը ամենամեծ հնարավորությունն էր տալիս արևմտահայության կյանքի բազմազան կողմերն ու խնդիրները արտացոլելու համար: Եվ, իսկապես, հարուստ ու հավաստի փաստերով բացահայտվում է երկրում տիրող ահավոր կամայականության ու բռնությունների, տնտեսական հետամնացության, սոցիալական ու խավարի պատկերը: «Թանձրամած», «միջնադարյան խավար», «ողբալու աշխարհ», «մարտիրոս ժողովուրդ», «Քլավառության, ավերի ու զրկանքների երկիր»,— ահա ներանց գործածած սովորական արտահայտությունները, «Հայերի մեջ եմ, բայց հայերից հեռու, Հայաստանի մեջ, բայց հայրենիքիս կարոտ»⁴, Արևմտյան Հայաստանում շրջագայություններից ստացած տպավորությունները այսպես է ձևակերպում Լ. Սարգսյանը:

Թուրքիայի բռնակալական լծի տակ հեծող ժողովրդի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակի արտացոլումը, ինչպես և պետք էր սպասել, լայն ծավալ ընդունեց 1895—96 թթ. ողբերգական դեպքերի կապակցությամբ: Բազմաթիվ կապեր հաստատելով դեպքերին մասնակից ու ականատես թղթակիցների հետ, օգտագործելով եվրոպական մամուլի տվյալները, փաստական հսկայական նյութերով Արասխանյանը պարբերաբար լուսաբանում էր իրերի ընթացքը Թուրքիայում, մեծ պետությունների ձեռնարկումները Եվրոպայում: Գիտնականի համբերությամբ ու մեղմալան տրեւթյամբ կուտակված այդ նյութերը հսկայական արժեք են ներկայացնում հարցի պատմությունն ու նրա եվրոպական արձագանքները ուսումնասիրելու տեսակետից:

Մինչև վերահիշյալ դեպքերն էլ, իհարկե, Արասխանյանն անդրադարձել էր հայկական հարցին: Երբ սկսվեց 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Արասխանյանն ուսանող էր Հայացիդի համալսարանում: «Մշակում» տպագրած մի քանի հոդվածները վկայում են, որ քսանամյա պատանուն նույնպես հուզել է արևմտահայության ազատագրության հարցը: Սկզբնական շրջանում նա էլ պատրանքներ էր տալիս այն կապակցությամբ, թե լուսավորված Եվրոպան իր ձեռքը կմեկնի Թուրքիայի լծի տակ հեծող քրիստոնյաներին: Արասխանյանին թվում էր, թե պատմությունը ականատես կլինի մի երկրորդ խաշակրաց արշավանքի: «Սելչուկյան թուրքերի» տանջանքներին «վերջ դնողները իրանք, նեղություն կրողները, չէին. նորադրան համբերում էին»: Հիմա էլ հայերն են լուսում. և նույն Եվրոպան է, որ պետք է, վառված քրիստոնեական սուրբ հավատով, «ասպետական անկեղծ գերազանցությամբ» վերջ տա այդ դրությունը⁵:

Ահա թե ինչու տասնամյակի հանրաճանաչ հրապարակախոսի նման նա էլ գտնում է, որ հայերը պետք է իրենց ձայնը լսեն անեն Եվրոպային: Այս նպատակի իրագործման համար առաջարկում է ստեղծել մի մասնաժողով, որը զբաղվի եվրոպական թերթերին «հայերի դրության, հայոց ազգի անավորության, հայերի ընդունակություններին, այդ ազգի ոգուն» վերաբերող հոդվածների առաքմամբ: «Այդպիսի մի գործ յպետք է թողնել անհատների կամքին, այլ լրագրերում տպվող հոդվածները պետք է մշակվեն խմբովին»⁶: Ոչ մի հայ չպետք է խուսափի իր լուսման մուծելու այդ մեծ ու ազնիվ գործին:

Արասխանյանն էլ դժգոհ էր այն բանից, որ հայերը անհրաժեշտ գործնականություն չեն դրսևորում. «Այլ քրիստոնյաները արյան հեղեղներ են թափում պատերազմի դաշտի վերաբնությունից պարզեած այն դրության համար, որը արտահայտում են «ազատություն» բառով»⁷, մինչդեռ հայերը սպասում են անտարբերությամբ:

Պատերազմի ավարտը և դրանից հետո ստեղծված իրադրությունը զգաստորեն քննեց նաև Արասխանյանը: ԲաՖՖու նման նա էլ մեկընդմիջտ հասկացավ, որ օտարի փրկության վրա հույս դնել չի կարելի. «օտարը կարող է համակրել թշվառներին, բայց հազիվ թե նա այնքան ոգայուն սիրտ ունենար, որ նոցա համար իրան գոհ բերե: Հայաստանի դիմաց—Եվրոպան է այդ օտարը»⁸:

Փոփոխված նոր պայմաններում Արասխանյանին ևս մտահոգում են արևմտահայության ազատագրության և դրան հասնելու ուղիների հարցերը: Այստեղ նա կրկին ընդհանրություն է դրուելորում ԲաՖՖիի հետ: Վերջինիս նման նա էլ փրկության միջոցը տեսնում է դպրոցի ու լուսավորության տարածման մեջ: Պետք է դաստիարակել ինքնավարության պահանջ առաջադրող և այն իրագործելու կարողություն ունեցող սերունդ: Իր ժամանակակիցներից Արասխանյանը տարբերվում էր նրանով, որ իբրև լուսավորության տարածման անհրաժեշտ պայման առաջադրում էր տնտեսական կյանքի բարդացման խնդիրը: Այսուհետև ամեն մի գործունեություն ու միջոցառման նշանակությունը պետք է չափել նրանով, թե որքանով է նպաստում այն ազգային վերածնության ու ինքնուրույնության հասնելու գործին:

⁴ «Մուրճ», 1889, № 7, էջ 1014—1015:

⁵ «Մշակ», 1876, № 46:

⁶ Ն. տ. 1887, № 47:

⁷ Ն. տ., 1876, № 46:

⁸ Ն. տ., 1880, № 97:

Նույն սկզբունքները պաշտպանում և ավելի է խորացնում «Մուրճում»:

Այս առումով ուշագրավ է նրա հատկապես «Տաճկահայկական խնդիրը» առաջնորդող՝ գրված Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածի 15-ամյակի կապակցությամբ: Որոշ նշանակություն տալով «լուսավորված ազգերի» պետությունների միջնորդությանը, իրրև մի մխիթարության, որն «ուժ է տալիս լքյաներին՝ ավելի մեծ հավատով վերաբերվել դեպի հաջողությունը ապագայում»⁹, Արասխանյանն ըստ էության մերկացնում է մեծ տերությունների դիտավորությունները հայկական խնդրում: Այդ երկրների թույլտվությամբ ու նրանց աչքերի առջև թուրքական կառավարությունը դաշնագրությունից հետո էլ շարունակում է իր հայաչինջ «հարստե» ու «սխտեմատիկական» քաղաքականությունը: Բարեփոխումներ մտցնելու փոխարեն բարբարոս պետությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք պետք է հեշտացնեին այդ մարդատյաց քաղաքականության իրագործումը կամ քողարկեին նրա անավոր բընուլը: Հայերը ինքնավարության պահանջը հիմնավորում էին շատ գավառներում թուրքերի համեմատությամբ իրենց թվական մեծամասնությամբ: Թուրքական կառավարությունը նման վայրեր բնակեցնելու գաղթեցրեց վայրենի շերտերներին, սկսեց գիտակցարար աղավաղված տվյալներ հաղորդել հայերի թվական կազմի մասին: Կառավարությունը ջանքեր չէր խնայում «չարիքները ավելացնելու» համար: Մեծագույն շարիքը, որ «բացարձակ թշնամություն էր պետության հայկական տարրի դեմ», 1891 թվին «ավազակարար» քրդերից համիդյան կողմից հատուկ զնդիր կազմեին ու զինավորելն էր, մյուս կողմից՝ հայ ազգաբնակչությունից զինվոր վերցնելը, որը հետապնդում էր հայերին ռազմական գործի մեջ չվարժեցնելու և նրանց ձեռք զենք չտալու նպատակով. չէ՞ որ անզեն ու զինվորական գործի մեջ անվարժ ժողովրդին ավելի հեշտ է բնաշնչել... «Եթե տաճկական կառավարությունը կարողացավ Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածը վրեժխնդրության հիմունք դարձնել, այդ նորանից էր, որ նա շատ լավ գիտեր, թե ինչպես է հասկանում ինքը Եվրոպան Թուրքիայի պարտավորությունը՝ «տեղեկացնել մեծ պետություններին» ձեռնարկած միջոցների մասին հիշյալ բարենորոգումների վերաբերմամբ»¹⁰:

Արասխանյանը «հայ ազգը բնաշնչել անելու» քաղաքականության՝ ետվահանժողովյան շերտանի նախապատրաստական աշխատանքի տրամաբանական շարունակությունն էր համարում 1895—96 թթ. ողբերգությունները, որոնց նախանշանը հանդիսացավ Սասունի կոտորածը նախորդ տարում: Հայկական խնդիրը նորից դարձավ օրակարգի հարց:

Նոր ժամանակներում կրկնվում էր պատմությունը՝ հայկական հարցը կրկին դարձել էր մեծ պետությունների շահերի բախման առիթ Փոքր Ասիայում և նոր պայմաններում Արասխանյանը շարունակում է եվրոպական մեծ տերությունների երկրեսանի արտաքին քաղաքականության մերկացումը: Նա տեսնում էր, որ հակամետ շահերը անհնար են դարձնում «կոնտրոլը», որ ասել էր թե՛ «նեֆորմների իրագործումը»: «... Ոչ ոք չի կատարում այն դերը, որ նա հայտարարում է և որ զխավորն է՝ դերակատարներից ոչ ոք հավատ չունի դեպի հակառակորդի խոսքը»¹¹: Սրտի ցավով էր արձանագրում Արասխանյանը, որ հայերի պաշտպանության վերաբերյալ եվրոպական դիվանագետների մարդասիրական ճառերը հայերին չեն պաշտպանում «սխտեմատիկական կոտորածներից», դրանով իսկ բացահայտելով այդ ճառերի էությունը: «Որքան Եվրոպան հավատ չունի դեպի Թուրքիան, որից նեֆորմներ են պահանջում, նույնպիսի էլ Թուրքիան հավատ չունի դեպի Եվրոպան, մասնավորապես դեպի Անգլիան, թե սա պիտի կարողանա վարվել իր սպառնալիքների համաձայն»¹²:

«Մուրճում» 90-ական թթ. աղետներին վերաբերող նյութերի առատությունը ավելի է ընդգծում հայկական հարցի լուծման ուղիների ու հնարավորությունների մասին ամսագրի հայտնած կարծիքների ևրկչությունը: Այս երկչությունը պատճառը պետք է որոնել ցարական կառավարության փոխված քաղաքականության մեջ: Եթե 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին ու ընթացքում հայ առաջադիմական մամուլը կարող էր բացահայտ կերպով հայերին զինված ապստամբության կոչել, որովհետև նման պահանջը օբյեկտիվորեն համընկնում էր ու նպաստում Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը, ապա 90-ական թթ. իրադրությունը միանգամայն փոխվել էր: Մոռանալով քրիստոնյա ժողովուրդների փրկության մասին կեղծավոր լուրերները, 90-ական թթ. նույն ցարական կառավարությունը, եվրոպական գիշարիչ պետությունների հետ միասին, օբյեկտիվորեն հնարավորություն է տալիս Թուրքիային հողտուելու մի անզեն ու ստեղծագործ ժողովրդի: Ավելին՝ Արևելյան Հայաստանում 80-ականին սկսած դաժան ռեակցիան հաջորդ տասնամյակում մոլեգնում էր նույն ուժով. քրիստոնյա ժողովուրդների «փրկիչ» ցարին վախեցրել էր քրիստոնյա հայերի անկախության ձրգտումը...

⁹ «Մուրճ», 1893, № 11, էջ 1621:

¹⁰ Ն. տ., էջ 1620:

¹¹ Ն. տ., էջ 1476:

¹² Ն. տ., էջ 1477:

Պարզ է, որ այսպիսի պայմաններում մամուլը ստիպված պետք է լիներ անհամեմատ զուսպ արտահայտվելու կամ դիմելու եզովպոսյան լեզվին: Ահա թե ինչու հայկական հարցի բնագավառում Արասխանյանի ծրագիրը սահմանափակվում էր մարդավայել պայմանների նվազագույնի պահանջով: Հայկական խնդիրը սկայանում է տաճկահայկական նահանգներին ինքնավարություն տալու մեջ, այս կամ այն շահով, բայց այնպես, որ Սասունի պես կոտորածները, ժողովրդի ա՛ն ու սարսափի մեջ պահվելը, անիրավ և մեծաքանակ ու սխտեմական բանտարկությունները հայի, իբր ազգության, իրավացի պահանջների համար,— այն ամենը, այլևս տեղի ունենալ չկարողանան»¹³:

Հետաքրքրական է նկատել, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերը քողարկված ձևով արծարծվել են հատկապես «ազատության սուրբ գաղափարին» նվիրված գրքերի թարգմանությունների գրախոսականներում: Զարդերին նախորդող տարիներին, ժողովրդի պայքարի ոգով դաստիարակելու նպատակով, բուլղարական գրականությունից թարգմանվում են բուլղար ժողովրդի ազատագրական կռիվներին ու այդ կռիվների հերոսներին նվիրված գրքեր: Ընդհանրապես պետք է ասել, որ 1877—78 թթ. պատերազմի հետևանքով ինքնավարություն ստացած, իրենց ինքնավարության համար պայքարած բուլղար ժողովրդի օրինակը միշտ էլ ոգևորել է հայերին: Ամսագիրը ընդգծում է, որ ազատագրական պայքարի մարտիկների գործունեությունը պատկերող գրքերը հսկայական նշանակություն ունեն ժողովուրդը «բարոյապես կրթելու» գործում: «Պատմական-կենսագրական բովանդակություն ունեցող գրքերը միշտ էլ մի առանձին հետաքրքրություն է կարող հասարակ ժողովուրդը. այդ պատճառով, ովքեր հավատում են թե ժողովուրդը կարելի է բարոյապես կրթել գրքերով, պետք է մի առանձին ուշք դարձնեն այն տեսակ բովանդակություն ունեցող գրքերի հրատարակության վերա»¹⁴, Ահա գաղտնիքը, թե ինչու «Մուրճի» գրախոսները բարձր են գնահատում բուլղար ժողովրդի «ամենափայլուն հերոսների»՝ Լևկու, Կարավաևի, հույն ժողովրդի ազատագրական պայքարի լեգենդար հերոս Բոցարիսի կյանքը պատկերող, «պատմական-կենսագրական բովանդակություն ունեցող գրքերը»: «Գրքույկում պատմվում է Բուլղարիայի նորագույն պատմության ամենափայլուն հերոսներից մեկի՝ սարկավազ Լևկու կյանքի և գործունեության մասին: Բուլղարական զորավոր կազմակերպություն տվողներից առաջիններն էին Լևկին և Լյուբեն Կարավաևը. նոցա ուսանելի գործունեության հետ բավականին լավ ծանոթացնում է այս գրվածքը»¹⁵: Դժվար չէ նկատել, որ այստեղ պաշտպանության է առնվում պայքարի մի ամբողջ ծրագիր: Եվ պատահական չէ, որ գրախոսը առաջարկում էր նման բնույթի գրքերը թարգմանել «Մուշի բարբառի» և տարածել ժողովրդի լայն խավերում: Լ. Սարգսյանը նման գրքերի շարքն էր դասում նաև Մխիթար սպարապետին նվիրված «Աղբալի» պատմվածքը: Նույն քննադատը ցանկություն էր հայտնում, որ «ժողովրդական ընթերցանության համար մի շատ էժանագին հրատարակություն շինվեր Բաֆֆիի «Դավիթ Բեգից», որտեղ թուրքերի դեմ անցյալ դարում հայերի մղած «բարունահեղ կռիվների... մի շարք ուժեղ, հզոր անձնավորություններ» են կերտված»¹⁶: Ամսագիրը պաշտպանում էր հայդուկային շարժումը, իբրև մի ժողովրդի ազատագրական պայքարի ձևերից մեկը: «Հայտնի քաղաքական պայմաններում մի ազգի մեջ հառաչ են գալիս առանձին տեսակ ավազակներ, որոնք մղում են կատաղի կռիվ թշնամիների հետ: Բուլղարիայում Հաչի-Դիմիտրին և Ստեփան Կարաչան այդ տեսակ ավազակների՝ գայդուկների՝ առաջին պարագույններից էին. նոցա քաղաքործությունները և հերոսական մահը թուրքերի դեմ վարած կռիվներում դարձրել են այդ անձնավորությունները բուլղար ժողովրդի համար պաշտելի»¹⁷: Նույն ձևով բարձր է գնահատվում և հետևելու արժանի օրինակ համարվում «հասարակական վրիժառու», հույն ժողովրդի քաչարի մարտիկ Բոցարիսի կերպարը¹⁸: Այս ամենը մեզ բերում է այն համոզման, որ Արասխանյանը պաշտպանում էր հայ ժողովրդի ազատությունը ազգային-ազատագրական պայքարով ձեռք բերելու գաղափարը...

Քանի որ խոսքը վերաբերում է հայերի ազատագրությանը, արժարժենք մի խնդիր ևս:

Անցյալի առաջադեմ գործիչների նման Արասխանյանը ևս հասկանում էր Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միավորման պատմական նշանակությունը: «Քաղաքացիության զգացմունքը» առաջնորդողում նա ընդհուպ մոտենում է այն ըմբռնման, որ քաղաքական ու կուլտուրական ցածր աստիճանի վրա գտնվող իշխող ազգերը խոչընդոտում են իրենց տիրապետությանը ենթարկված, առավել կուլտուրական ժողովուրդների զարգացումը: Էականը, սակայն, այն է այս առաջնորդողում, որ ամենայն որոշակիությամբ ընդգծվում է Ռուսաստանի կառավարման սխտեմի առավելությունները արևելյան տիպի այնպիսի պետությունների համեմատությամբ,

¹³ Ն. տ., 1895, № 3—3, էջ 543:

¹⁴ Ն. տ., 1890, № 6, էջ 863—884:

¹⁵ Ն. տ., էջ 884:

¹⁶ Ն. տ., էջ 885:

¹⁷ Ն. տ., էջ 884:

¹⁸ Ն. տ., 1891, № 7—8, էջ 923:

ինչպիսիք են Քուրթիան ու Պարսկաստանը: Վերջիններին տիրապետության պայմաններում հայերը ճնշվում են ոչ միայն քաղաքական իշխանությունից, այլև իշխող ազգերից: Այս «Երկակի հպատակությունը» վերջ տրվեց Հայաստանի՝ եվրոպական կառավարման ձևեր յուրացրած Ռուսաստանին միանալու ակտով: Արասխանյանը նկատի ունի օրինքի առջև հայ և ռուս քաղաքացիների հավասարության, հայերի նկատմամբ կրոնական անլուր հայածանքների վերացման, Պարսկաստանի ու Քուրթիայի համեմատությամբ Ռուսաստանի առաջադիմական տրեստական կյանքով զարգանալու և այլ հանգամանքներ: Վերջին հանգամանքը հատուկ ընդգծում է դարասկզբին գրած իր լավագույն հոդվածներից մեկում՝ «Հայրենական խոհեր» շարքում: Անդրկովկասյան երկրների՝ Ռուսաստանին միանալը ունեցավ այն նշանակությունը, որ Ռուսաստանի (և սրա միջոցով Եվրոպայի) հետ շփման հնարավորություն ստեղծվեց «Քնտեսական գործունեության և թե մտավորի համար»¹⁹:

Հայ ժողովրդի համար Ռուսաստանի առաջադիմական դերի ըմբռնումը չէր խանգարում Արասխանյանին անհրաժեշտ դեպքում իր դժգոհության ձայնը բարձրացնելու փոքր ժողովուրդների նկատմամբ շովինիստական քաղաքականության դեմ: Նա մի առանձին կրթություն էր արտահայտվում ռուսական «հայածող շովինիստ թերթերի» մասին: Ոչ առանց գայրույթի նա ընդգծում է, որ կառավարության բերան մամուլը ատելություն է սերմանում հայերի նկատմամբ, մինչդեռ հայկական մամուլը իր ձայնը լսելի անելու ոչ մի հնարավորություն չունի: Մեր ձայնը, իբրև հայոց մամուլի ձայն, կարելի է ասել, քնավ տեղ չի հասնում», հայերը «դրականապես ոչ մի պաշտոնական միջոց չունին իրենց ձայնը լսելի անելու ուր հարկն է»²⁰:

Եվրոպական պետությունների արտաքին քաղաքականությունը մերկացնող հրապարակախոսը, ինչ խոսք, հնարավորություն չունի նույնպիսի բացահայտ ձևով քննադատելու նաև ցարական Ռուսաստանի դիրքը հայկական հարցում, թեև 1895—96 թթ. դեպքերին նվիրված հոդվածներում առանձին արտահայտություններ ու դիտողություններ կան այդ ուղղությամբ ևս: Ահա թե ինչու Արասխանյանը (հայկական առաջադեմ մամուլի օրգաններն ու հրապարակախոսները ընդհանրապես) իր գայրույթն ու դժգոհությունը ընդգծված ձևով արտահայտում էր ռուսական շովինիզմի ու մեծպետականության առանձին ներկայացուցիչների դեմ գրած հոդվածներում:

Բայց արդեն դարասկզբին նա բացահայտ դժգոհություն ու անվստահություն է հայտնում ցարական կառավարության հանդեպ: Վերոհիշյալ «Հայրենական խոհերում» կարդում ենք. «Անցել է այն ժամանակը, երբ բարձր իշխանության դեպի «անաշատություն» հրավիրող կռիվներ... կարող էին վստահություն ներշնչել... Վստահությունը գործելով է վաստակվում և ոչ թե հրամաններով»²¹:

Արասխանյանի և նրա խմբագրած «Մուրճի» հասարակական-քաղաքական հայացքների բնութագրման տեսակետից ուշադրության արժանի է խաղաղության և պատերազմի խնդիրների լուսաբանումը: 1899 թ. Հաագայում հրավիրվում է կոնֆերանս, ուր ընդունվում են միջազգային համաձայնագրեր պատերազմ վարելու օրենքների, շեղոթության, միջազգային վիճելի հարցերը խաղաղ միջոցներով կարգավորելու վերաբերյալ: Կոնֆերանսը հրավիրվում է Ռուսաստանի նախաձեռնությամբ: «Մուրճը» թարգմանում է «Թագավոր կայսրի բարձրագույն հրամանը», որով բոլոր պետություններին առաջարկություն էր արվում կոնֆերանսում վճռել «ընդհանուր խաղաղության մեծ գաղափարը», իսկ մի տարի անց կոնֆերանսի վերաբերյալ հանդես է գալիս մի ընդարձակ հոդվածով: «Զանազան լուրեր» բաժնում տեղեկություններ է հաղորդում կոնֆերանսի մասնակիցների, նախապատրաստության ու ընթացքի մասին: «Զինաթափման խնդիրը» հոդվածի էական միտքն այն է, թե իրավունքը միշտ էլ ուժեղի կողմն է, թե աշխարհի շատ երկրների բախտը վճռվում է հզոր պետությունների ցանկությամբ (պատերազմով կամ առանց պատերազմի): «Զնայած պատերազմների դեմ վարած պրոպագանդային, վերջինս քնավ չի կարողացել մի այնպիսի արմատ գցել ժողովուրդների մեջ, որ անզեն կացությունը դառած լինի դավանանք ոչ միայն որևէ պետության, այլև կառավարության, և նույնիսկ որևէ քաղաքական կուսակցության»²²,— գրում է Արասխանյանը: Կոնկրետ փաստերով նացույց է ապլիս, որ միջազգային հարաբերություններում պետությունները ղեկավարվում են ուժի քաղաքականությամբ: Իրավունքը բոլոր դեպքերում ուժեղի կողմն է: Մենք տեսնում ենք,— շարունակում է նա,— որ խաղաղության քաղաքականությունով մեծ խնդիրներ հարթելը ոչ մի կերպ չի փոխում իրավունքի հարցը, որովհետև նաև խաղաղությամբ խնդիրներ վճռելիս՝ վարագույրի ետևը պսպղող սվիններն են, որ խոսում են» (բոլոր մեջբերումներում ընդգծումները Արասխանյանինն են.— Գ. Ա.): Անգլիան և Ռուսաստանը համաձայնության են եկել Զինաստանում ազդեցության սֆերաների բաժանման խնդրում, մինչդեռ նույն Անգլիան

¹⁹ «Արշալույս», Թիֆլիս, 1905, № 237:

²⁰ «Մուրճ», 1897, № 9, էջ 1147:

²¹ «Արշալույս», 1905, № 42:

²² «Մուրճ», 1899, № 4—5, էջ 508:

նույն Զինաստանի հարցում բանակցություններ չի վարում Իտալիայի հետ, որովհետև վերջինս ռազմական որևէ լուրջ օգնություն Անգլիային ցույց տալ չի կարող, որովհետև վարագույրի ետև պայտազող սվիններ չունի:

Իր հողվածում Արասխանյանը, այսպիսով, մերկացնում է իմպերիալիստական խոշոր պետությունների երկերեսանի դիվանագիտությունը, դիվանագիտություն, որը խաղաղության մասին լուզունգներով քողարկում էր սպառազինությունների մրցավազքը: Հենց այս երկդիմի դիվանագիտության և փոքր ազգերի նկատմամբ կիրառվող ազգահալած, գաղութային քաղաքականության խոր ընկալումը այն ճանապարհներից էին, որոնք Արասխանյանին բերեցին դեպի մարքսիստական ուսմունքը:

«Մուրճը» առաջին օրգանն է արևելահայ իրականության մեջ, որն «իր ընթերցողներին որոշ շահով ծանոթացրեց մարքսիզմի ուսմունքի հետ»²³: Ամսագրի էջերում լուսարանվել են մարքսիստական տնտեսագիտության առանձին տեսական դրույթներ, մեջբերումներ են կատարվել, իհարկե, առանց անունները տալու, Մարքսի և էնգելսի աշխատություններից, 1895 թվին, «հայտնի սոցիալիստ» էնգելսի մահվան կապակցությամբ, շարադրվում է նրա համառոտ կենսագրությունը, որտեղ տեղեկություններ են հաղորդվում նաև «Կապիտալի» մասին: Ամենաուշագրավ Լերուլթը, սակայն, Գ. Ղարաջյանի «Քաղաքակրթության զարգացման ընթացքը» ծավալուն ուսումնասիրությունն է, որը, ըստ էության, համառոտագրությունն է էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» հանրահայտ աշխատության:

Մարքսիզմի նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությունը պատահական երևույթ չէր, ոչ էլ արդյունք էր որևէ մեկի անձնական նախաձեռնության: Խոշոր արդյունաբերության զարգացման հետևանքով բազմազգ պրոլետարիատի ձևավորումը, բանվորական ու գյուղացիական հեղափոխական շարժումների նկատելի աշխուժացումը մասնավորապես տասնամյակի երկրորդ կեսերին, Եվրոպայում ու առավել ևս Ռուսաստանում մարքսիստական մտքի լայն պրոպագանդայի գոյության փաստը օբյեկտիվ պայմաններ են ստեղծում Կովկասում մարքսիզմի տարածման համար:

«Մուրճի» խմբագիրը նոր չէր ծանոթանում սոցիալ-դեմոկրատների ուսմունքին: Լայպցիգի համալսարանի ուսանող Արասխանյանը, ինչպես երևում է քրոջ ամուսնուն գրած նամակից, որոշակի ծանոթություն ուներ նրանց զաղափարներին, թեև համակրանքով արտահայտվում էր այդ ուսմունքի մի քանի բաների մասին» միայն:

Ուսանողական տարիներին սոցիալ-դեմոկրատների ուսմունքի «մի քանի բաներ» համակրող Արասխանյանը 90-ական թվականներին առաջինն է իր խմբագրած ամսագրի էջերը տրամադրում այդ ուսմունքի շատ բաների պրոպագանդային, իսկ 1900-ականներին արդեն, ինչպես վկայում են փաստերը, ամբողջ հայացքով դառնում է դեպի մարքսիզմը:

Արասխանյանը հանգել էր այն եզրակացության, որ «այժմ և սրանից հետո (խոսքը վերաբերում է 1905 թ. հեղափոխությանն ու նրան հաջորդող ժամանակաշրջանին.— Գ. Ա.) առանց Մարքսի անհնար է ոչ առաջացնել արմատական ռեուլյուցիա, ոչ էլ հասկանալ ներդրանք»²⁴. Որ մարքսիզմի նկատմամբ նրա հետաքրքրությունը անցողիկ ու պատահական չէր, վկայում են նաև ժամանակակիցները: «Նա նույնպես առանձին ուշադրության արավ մարքսիզմի գործած նվաճումները տնտեսական կյանքի մեջ և, շնայելով առաջ նայում էր Մարքսի վրա իբրև ավելի ղոկտրինյորի վրա, զբաղվեց նրանով՝ իբրև ռեալ ազդեցիկ գործոնով և վճռեց թարգմանել նրա նշանավոր «Կապիտալը»²⁵,— գրում է Ա. Քալանթարը:

Արասխանյանն առաջինն է մեր իրականության մեջ ձեռնարկել Մարքսի «Կապիտալի» թարգմանությանը, որին տեղյակ էր նաև Ստեփան Շահումյանը²⁶: Ի դեպ՝ ականավոր մարքսիստը մինչ այդ էլ բարձր էր գնահատել Արասխանյանի գործունեությունը: Երբ 1900 թվին (վեց համար հրատարակվելուց հետո) դադարեց «Մուրճի» հրատարակությունը, «Մշակ» օրաթերթը դա առիթ դարձրեց Արասխանյանին նոր ու ավելի անարգարացի մեղադրանքներ վերագրելու համար: «Միթե կարիք կա բացատրելու» վերնագրով հողվածի հեղինակը իրեն թույլ է տալիս «Մուրճի» անհաշողությունը բացատրելու «ամսագրի վարողի ծայրահեղ անշնորհքությամբ»: Արասխանյանը «ոչինչ չկարողացավ ստեղծել 10—12 տարվա ընթացքում, բացի գրական խնդկատակություններից»²⁷,— գրում է անունը երեք աստղանիշի տակ թաքցրած հողվածագիրը: «Մուրճի» դեմ եղած անազնիվ քննադատության բարձրակետն էր սա: «Հրեշավոր կրքերին, անսահման եսամոլության,— շարունակում է երեք աստղանիշը,— զոհ են գնում

²³ Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուղիվազներ, Եր., 1959, էջ 456:

²⁴ Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուղիվազներ, էջ 459:

²⁵ «Մշակ», 1912, № 274:

²⁶ Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուղիվազներ, էջ 459—460:

²⁷ «Մշակ», 1900. № 224:

նույնիսկ համակրելի գործերը»,— Արասխանյանի ու «Մուրճի» դեմ գրած այս խոսքերը հենց իրեն՝ հողվածագրին էին վերաբերում:

«Մշակի» խմբագրության վերաբերմունքը, հողվածագրի անազնիվ արարքը դատապարտելու և «Մուրճի» ու նրա խմբագրի պաշտպանության պարտականությունը իր վրա է վերցրնում Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Ստեփան Շահումյանը: «Տարազում» լույս է տեսնում նրա նամակ-բողոքը, որն արժանի է ուշադրության ոչ միայն նրանով, որ «Մուրճի» առաջին հրատարակային պաշտպանությունն է և ամսագրի ու նրա խմբագրի մի քանի արժանիքների առաջին լուրջ գնահատման փորձը, այլև նրանով, որ վկայում է երիտասարդ մարքսիստի հետաքրքրությունը հայկական կյանքի, գրականության ու մշակույթի ներկատմամբ:

Ընկերներին ու հարազատներին գրած շատ նամակներում Շահումյանը ուշադրավ և ուսանելի դիտողություններ է անում «Մուրճի», սրա աշխատակիցների վերաբերմամբ: Նամակներից պարզվում է նաև, որ Շահումյանը մեծ հետաքրքրությամբ էր հետևում հայկական մամուլին ընդհանրապես և բարձր էր գնահատում հատկապես «Մուրճը»:

Հենց ամսագրի նկատմամբ ունեցած հետաքրքրությունն ու բարձր համարումն էր պատճառը, որ նա հանդես եկավ Արասխանյանի պաշտպանության վրա: Հետաքրքրական է նկատելի, որ Շահումյանն իր նամակ-բողոքն ուղարկում է «Մշակին», բայց քանի որ վերջինս, ինչպես և պետք էր սպասել, հրաժարվում է տպագրել, ուստի հեղինակն այն լույս է ընծայում «Տարազում»²⁸:

Նամակի սկզբում Շահումյանը «սրտի ցավով» է նշում հայ մամուլի ու տպագրության գործի անմխիթար վիճակը, «մասնավորապես «Մուրճ» ամսագրի նյութական անապահովությունն իր գոյության ընթացքում»: «Մուրճի» դադարման պատճառը նա իրավացիորեն տեսնում է նյութական հանգամանքների, այն է՝ «բաժանորդների քլուբյան» մեջ և կտրուկ եզրակացնում, որ «Մշակում» տեղ զրած հողվածները «լուկ կրթից բխած անվանարկություն են»: «Մշակի» հողվածագրի օրինակով նա բացահայտում է ժամանակի մամուլի խայտառակ բարքերը: «Մուրճի» մեծագույն արժանիքը նա տեսնում է այն բանի մեջ, որ ամսագիրը միշտ էլ անաշուտ պայքար է մղել գրական բարքերի շտակության համար և ինքը եղել է շտակության ու ազնվության օրինակ: «Մուրճը» գրականության անկեղծ և անաշուտ բարեկամների համար, որոնք նշանակություն չեն տալիս մի երկու գրողի անձնական կոփվներին, միշտ հետաքրքիր է եղել իր բովանդակությամբ և մանավանդ ամբողջ հայ ընթերցող նաստակության կողմից նախաձեռնված շտակության և ազնվության (ընդգծումը իմն է— Գ. Ա.)²⁹: Մամուլի և գրական բարքերի ազնվացման ջատագով Շահումյանը չէր կարող անտարբեր դիտորդ լինել այն բանի, թե ինչպես նույն նպատակի համար պայքարած և այդ նպատակն իրագործած մի ամսագիր իր խմբագրի հետ միասին զոհ է գնում անմաքուր կրթիքին:

Վերջին մեջբերման մեջ գնահատված է «Մուրճի» մի ուրիշ արժանիքը՝ բովանդակության կողմից հետաքրքիր լինելը: «Մշակի» հողվածագիրը հանդգնում էր բովանդակության կողմից «Մուրճն» անվանել «դատարկությամբ փայլող» օրգան: Շահումյանն այս կետում ևս հակադրվում է անազնիվ հողվածագրին:

«Մուրճը» միշտ եղել է հայ լրագրության քննության առարկան: Ըստ որում նկատելի է, որ ամսագրի հակառակորդները ամեն կերպ աշխատել են սովեր ձգել նրա երևան հանած գրական ուժերի վրա: Նույն բանն էր կրկնում նաև «Մշակի» հողվածագիրը, երբ սևով սպիտակի վրա գրում էր, թե 10—12 տարում Արասխանյանը ոչինչ չի ստեղծել, բացի գրական խեղդատակություններից: Եվ ահա իր պատասխանում Շահումյանը պաշտպանության տակ է առնում ամսագրի շուրջը համախմբված «երիտասարդ գրողներին», որոնք իրենց ստեղծագործություններով այն շատ կողմերից դարձրել են հետաքրքիր և ուսանելի:

Հիշյալ նամակը Ստ. Շահումյանի առաջին տպագիր ելույթն է:

Г. Г. АНАНЯН—Аветик Арасханян—публицист.—Характеризуя публицистику выдающегося армянского литературного и общественного деятеля второй половины прошлого и начала нынешнего века Ав. Арасханяна, автор статьи показывает, как этот передовой мыслитель правильно ориентировался в сложной и противоречивой обстановке современности. На страницах редактируемого им журнала «Мурч» он последовательно поднимал животрепещущие для армянского народа вопросы, отстаивал необходимость освобождения его от чужеземной тирании, осуждал двурушническую дипломатию империалистических держав. Арасханян стал одним из первых пропагандистов марксистских идей в армянской действительности. Его заслуги в политической публицистике высоко оценил Ст. Шаумян.

²⁸ Տե՛ս «Գրական թերթ», 1954, № 24, Գ Հովանիի հաղորդումը՝ «Ստեփան Շահումյանի մի անհայտ հողվածը» վերնագրով:

²⁹ «Տարազ», 1900, № 50: